ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«03» մայիսի 2018 թ. № 134-Հ.

ՀՐԱՄԱՆ

«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ, ԽԱԽՏՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2018թ. մարտի 29-ի թիվ 03/24-2/5728-18 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018թ. մարտի 17-ի թիվ 104-Ա հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2014թ. հունվարի 01-ին տրված թիվ ԽՏ-001 խաղատան կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2018թ. մարտի 28-ին կազմված թիվ ԽՏ-02 ակտի՝ «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կատարել է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» և «թ» կետերով սահմանված պահանջների խախտումներ, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 23-րդ հոդվածի 1-ին մասով և 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների խախտումներ:

Վերոգրյալի հիման վրա ղեկավարվելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ, 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի «բ» կետով, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» և «թ» կետերով սահմանված պահանջները խախտելու համար «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառել նախազգուշացում:
2. Սահմանել 15-օրյա ժամկետ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» և «թ» կետերի պահանջների կատարումն ապահովելու համար:
3. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը խախտելու համար «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք վեց հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
4. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը խախտելու համար «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք երկու հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

5. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը խախտելու համար «Օնիրա Քլաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք վեց հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

6. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024154 հաշվեհամարին:

7. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:

8. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

9. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ